

Ջերմուկի դեսպանների ակումբի հանդիպումը

03.03.2014



Ջերմուկում մարտի 2-ին՝ Հայաստանի Հանրապետության դիվանագետի օրը, ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի ներկայությամբ տեղի ունեցավ Ջերմուկի դեսպանների ակումբի հանդիպումը:

Դեսպանների ակումբը հիմնադրվել է անցյալ տարի Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարի նախաձեռնությամբ: Ակումբի նախագահն է ի պաշտոնե Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի դուայեն (ավագ) Ղազախստանի դեսպան Այիմդոս Բոզժիգիտովը:

Ավանդույթի համաձայն՝ ակումբի ամենամյա հանդիպումները հյուրընկալվում են Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանի և Ջերմուկի քաղաքապետ Վարդան Հովհաննիսյանի կողմից:

Հանդիպմանը մասնակցում էին ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Արտակ Չաքարյանը, ՀՀ արտգործնախարարի տեղակալները, Հայաստանում հավատարմագրված դեսպանները:

Էդվարդ Նալբանդյանն ակումբի անդամների հետ քննարկեց 2013 թ. Հայաստանի արտաքին քաղաքական բնագավառում տեղի ունեցած զարգացումները, միջազգային կազմակերպություններում ներգրավվածության խորացման և համագործակցության սերտացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, դարաբաղանի հիմնախնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ Հայաստանի և միջազգային հանրության կողմից գործադրվող քայլերը, միջազգային և տարածաշրջանային օրակարգային խնդիրների վերաբերյալ Հայաստանի մտտեցումները:

Էդվարդ Նալբանդյանը և դեսպանները մտքեր փոխանակեցին Հայաստանի և ներկայացված երկրների միջև հարաբերությունների զարգացման նպատակով իրականացված ծրագրերի և ընթացիկ տարվա անելիքների վերաբերյալ: